

դուին սովորաբար «տէրունական տօնից եւ ամենայն կիրակէի»¹ . կամ աւելի ուրոշ, «Վարդավառին եւ Աստուածածնին, Խաչի եւ Եկեղեցւոյ, Առաքելոց եւ Մարգարէից եւ ամենայն սրբոց, նաեւ յամենայն կիրակէի»² ըստ հին աւանդութեան (Թէոփ. 282): Սրբոց յիշատակին ազապը, յիշուած այդ երկու հայ մատենագրերէն, շատ հին է միւս քրիստոնէից մէջ եւս (Կարբ. Ա, 816-20):

Բայց մշակ ժողովուրդն աւելի կ'ընտրէր տարւոյն այն եղանակն՝ ուր բնութիւնն իւր բարիքներով կը վարձատրէր անոր աշխատութիւնը, եւ կը ղիւրացնէր անոր նուիրատուութիւնը: «Սովոր եմք, կ'ըսէ Տաթեւացին, ի մոռտս աշնան, յորժամ արմտիք ժողովին ի կալոյ եւ յայգւոյ եւ ի ծառոց», մատուցանել մատաղներն եւ այլ նուէրներ (Քրգ. ամբ. 481): Եւ այս նոյն էր հրէականին հետ, որ ունէր «ըզտօն կատարածի ելից տարւոյն՝ ի ժողովել գործոց յանդէ» (Եւք, ԽԳ, 16), յորս իրենց բերքերէն կ'ընծայէին Աստուծոյ: Հին ժամանակ սակայն ազոր հետ կամ փոխանակ ազոր՝ Հայոց մէջ կար ամառնային հանդէս մը, յիշուած ու կոչուած Ս. Սահակայ կանոններէն՝ «տօն նորեայ¹»

1. Այդպէս ըստ 1614ի կանոնագրին Վենետիկոյ, զոր